ԱՄՓՈՓ ԾՐԱԳԻՐ

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմքում պետք է դրվի հավասարակշռության դոկտրինան՝ որպես պետական մտածողության, ռազմավարական կայունության և երկարաժամկետ անվտանգության հիմնասյուն։

Հավասարակշռության դոկտրինան ենթադրում է բալանսավորված, կանխատեսելի և սուվերեն արտաքին քաղաքականություն, որը չի ծառայում որևէ աշխարհաքաղաքական կենտրոնի շահերին՝ ընդդեմ մյուսի, և Հայաստանը չի վերածում ազդեցության գոտու կամ ֆորպոստի։

Ի. Հիմնարար սկզբունքներ

Հայաստանի արտաքին քաղաքականությունը պետք է առաջնորդվի հետևյալ հիմնարար սկզբունքներով.

ակտիվ և նախաձեռնողական արտաքին քաղաքականություն՝ բոլոր ուղղություններով և բոլոր ազիմուտներում,

արտաքին քաղաքականության կտրուկ և չհաշվարկված շրջադարձերի բացառում,

ճամբարային կողմնորոշումների մերժում,

ռուսամետության կամ արևմտամոտության բացառումը որպես պետական քաղաքականության գաղափարական հիմք,

հակառուսականության և հակաարևմտականության բացառում՝ որպես պետական շահին հակասող մոտեցումներ։

Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքում պետք է լինի ոչ թե աշխարհաքաղաքական նախասիրությունը, այլ պետական շահի գիտակցված և հետևողական պաշտպանությունը։

Ռազմավարական գործընկերություններ

Ռուսաստան

Հայաստանը պարտավոր է վերահիմաստավորել և զարգացնել իր ռազմավարական հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ հիմնվելով փոխադարձ շահերի, հավասարակշռության և սուվերենության սկզբունքների վրա։

Եվրասիական տնտեսական և անվտանգային կառույցներում Հայաստանի մասնակցությունը պետք է լինի ակտիվ, նախաձեռնողական և նպատակաուղղված՝ սեփական ազգային շահերի հստակ ձևակերպմամբ և պաշտպանության մեխանիզմների ուժեղացմամբ։

Եվրոպական միություն
Եվրոպական միության հետ հարաբերությունները Հայաստանի համար ունեն կարևոր քաղաքական և ինստիտուցիոնալ նշանակություն։
Համագործակցության առանցքում պետք է լինեն՝ պետական կառավարման համակարգի խորքային բարեփոխումները,
իրավական պետության և անկախ դատական համակարգի ամրապնդումը, հակակոռուպցիոն ինստիտուտների զարգացումը, տնտեսական մրցունակության և մարդկային կապիտալի աճը։

Միացյալ Նահանգներ
Հայաստան–ԱՄՆ հարաբերություններում առաջնահերթությունը պետք է տրվի քաղաքական երկխոսության խորացմանը և տնտեսական համագործակցության ընդլայնմանը՝ ուղղված ներդրումային միջավայրի բարելավմանը, նոր տեխնոլոգիաների ներգրավմանը և տնտեսական աճի խթանմանը։

Բազմավեկտոր արտաքին քաղաքականություն
Հայաստանի համար կենսական նշանակություն ունի արտաքին քաղաքական դիվերսիֆիկացիան։
Հատուկ ուշադրություն պետք է դարձվի հարաբերությունների զարգացմանը՝ Հնդկաստանի, Չինաստանի, արաբական աշխարհի պետությունների հետ։
Այս ուղղությունները հնարավորություն են տալիս Հայաստանին ընդլայնել իր տնտեսական, պաշտպանական և դիվանագիտական հնարավորությունները և նվազեցնել աշխարհաքաղաքական կախվածությունների ռիսկերը։

Հարևանների հետ հարաբերությունները՝ անվտանգության հիմք
Հայաստանի անվտանգության և կայունության կարևորագույն երաշխիքներից է հարևան երկրների հետ բնականոն և փոխշահավետ հարաբերությունների հաստատումը։

Իրան և Վրաստան
Իրանն ու Վրաստանը Հայաստանի բարեկամ երկրներն են։

Այս հարաբերություններում առաջնահերթ պետք է լինեն՝ տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացումը, էներգետիկ անվտանգության ապահովումը, ոլորտային և տարածաշրջանային համատեղ ծրագրերի իրականացումը։

Թուրքիա
Հայ–թուրքական հարաբերությունների կարգավորումը պետք է իրականացվի առանց նախապայմանների, հավասարության և սուվերենության սկզբունքների պահպանմամբ։

Ադրբեջան
Հայ–ադրբեջանական հարաբերություններում միանշանակ մերժելի է միակողմանի զիջումների մոդելը։
Կարգավորման գործընթացը կարող է արդյունավետ լինել միայն բալանսավորված լուծումների միջոցով, որոնք հիմնված են փոխադարձ պարտավորությունների, միջազգային իրավունքի և տարածաշրջանային կայունության ապահովման վրա։
Խաղաղության որևէ գործընթաց չի կարող լիարժեք և կայուն լինել, եթե այն չի ներառում արցախցի մեր հայրենակիցների անվտանգ, արժանապատիվ և կազմակերպված վերադարձը իրենց պատմական բնակավայրեր։

<u>ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՎԱԾ ՄՈԴԵԼ</u>

Հայաստան Հանրապետության պետական կառավարման ապարատի օպտիմալացված մոդելն ուղղված է ուռճացված ծախսերի կտրուկ կրճատմանը, իշխանական լեգիտիմության բարձրացմանը և պետական ռեսուրսների արդար բաշխմանը.

I. Սկզբունքային մոտեցում
Մոդելը հիմնված է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.
1. Պետական ռեսուրսը՝ ոչ թե արտոնություն, այլ անհրաժեշտություն
2. Անձնական անվտանգությունը՝ միայն պետության առաջին դեմքերի համար
3. Ծառայողական մեքենան՝ բացառություն, ոչ պարտաֆիր պայման։
4. Թափանցիկություն և հաշվետվություն՝ յուրաքանչյուր լումայի համար

II. Ծառայողական մեքենաների և պետական անվտանգության նոր ռեժիմ

1. ԲԱՑԱՌԱՊԵՍ հետևյալ հինգ պաշտոնավորների համար

1 Իշխող կուսակցության պատվավոր նախագահ

2 Իշխող կուսակցության նախագահ

3 Ազգային ժողովի նախագահ

4 Հանրապետության նախագահ

5. Հանրապետության վարչապետ

Պետական անվտանգություն

Ծառայողական ավտոմեքենա (մեկ մեքենա)

Պետական Վարորդ

Պետական մակարդակով հյուրերի ընդունման համար պետական մակարդակով ավտոպարկում կլինեն համապատասխան թվաքանակով մեքենաներ, թե չէ ստացվում է, որ գյուղի կլուբը քանդվում է, սակայն գյուղապետը հարյուր հազարանոց դոլարի մեքենա է քշում։

Հիմնավորում – սրանք են այն անձինք, որոնց անվտանգությունը նույնացվում է պետական կայունության հետ։

2. ԲՈԼՈՐ ՄՆԱՑՅԱԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ ՉԵՆ ՕԳՏՎՈՒՄ

Ծառայողական մեքենայից

Պետական վարորդից

Պետական անվտանգության ծառայությունից

ՍՏԱՆՈՒՄ ԵՆ

Հավելավճար՝

Տարբերակ A – Բենզինի փոխհատուցում

Ամսական ֆիքսված լիտր (օր.՝ 80–120 լիտր)

Էլեկտրոնային քարտով Միայն ՀՀ տարածքում

Տարբերակ B – Դրամական փոխհատուցում

Մինիմալ ֆիքսված գումար

Ներառված աշխատավարձի մեջ

Չի աճում պաշտոնի բարձրացման հետ

III. Օրենսդրական կարգավորում

1. Ընդունվում է նոր օրենք

«Պետական ռեսուրսների օգտագործման սահմանափակման մասին»

Օրենքով՝

Արգելվում է ծառայողական մեքենաների օգտագործումը ոչ առաջին դեմքերի կողմից

Արգելվում է ընտանիքի անդամների սպասարկումը

Խախտումը դիտարկվում է որպես պետական միջոցների վատնում

2. Քրեական և կարգապահական պատասխանատվություն
Վերադարձ պետական բյուջե
Պաշտոնանկություն
Կրկնակի դեպքում՝ քրեական պատասխանատվություն։

IV. Ֆինանսական էֆեկտ (կոպիտ հաշվարկ)

Ցուցիչ	Մինչև ռեֆորմ	Ռեֆորմից հետո
Ծառայողական մեքենաներ	700+	4
Վարորդներ	700+	4

Վառելիք Միլիոնավոր դրամներ Մինիմալ
Տարեկան խնայողություն - Տասնյակ միլիարդ դրամ
Քաղաքական և հասարակական արդյունք
Պետության նկատմամբ վստահության աճ
«Իշխանություն = արտոնություն» մտածելակերպի կոտրում
Հասարակության և իշխանության միջև հոգեբանական հավասարություն
Միջազգային դրական ընկալում (խնայող կառավարում)

ՈՒՂԵՐՁ ԸՆՏՐՈՂԻՆ՝ Պետական պաշտոնը մեքենա չէ, այլ պատասխանատվություն։ Ով ուզում է շքեղություն՝ թող չմտնի պետական ծառայության։

ԴԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

I. Կառուցվածքային և ինստիտուցիոնալ ռեֆորմներ

1. Դատարանների իրական մասնագիտացում
Ներկայում ունենք ձևական մասնագիտացում։ Անհրաժեշտ է՝
առանձին վարչական դատարաններ մարզերում,
հարկային–մաքսային դատարան,
ընտանեկան դատարան,
բիզնես և ներդրումային վեճերի դատարան։
Արդյունք՝ գործերի 25–30% անմիջապես դուրս կգան ընդհանուր իրավասությունից։

2. Դատավորների քանակի և բաշխման ռեֆորմ
Դատավորների ծանրաբեռնվածությունը բաժանել ոչ թե քանակի, այլ գործի բարդության վրա,

Ստեղծել դատավորի օգնականների ինստիտուտ՝ իրավական եզրակացության նախապատրաստմամբ։
Արդյունք՝ վճռի կայացման ժամկետների կրճատում։

II. Դատավարական իրավունքի ռեֆորմներ (բեռնաթափման հիմնական աղբյուր)

3. Պարտադիր նախադատական գործառույթներ։
Ընտանեկան, աշխատանքային, գույքային, վեճերով՝
Դատարան դիմել միայն արտադատարանական ձախողման դեպքում։
Եվրոպայում սա կրճատել է գործերի հոսքը մինչև 40%:

4. Փոքր պահանջների գործերի գրավոր վարույթ՝
Մինչև որոշակի դրամական շեմ
Առանց դատական նիստի՝ միայն գրավոր փաստարկներով
Արդյունք՝ հազարավոր գործերի արագ լուծում։

III. **Վերաքննիչ և վճռաբեկ փուլերի ռեֆորմ**

5. Վճռաբեկ դատարանի իրական ֆիլտրում
Վճռաբեկը զբաղվի միայն իրավունքի զարգացման հարցերով,
Վերացնել «յուրաքանչյուր գործ՝ վճռաբեկ» մշակույթը։
Սա համապատասխանում է ԵՄ և ՄԻԵԴ ստանդարտներին։

6. Նախադեպի պարտադիր ուժ
Վճռաբեկի դիրքորոշումը պարտադիր լինի ստորադաս դատարանների համար
Շեղումը թույլատրվի միայն հիմնավորված բացառությամբ
Արդյունք՝ նույնատիպ գործերի կտրուկ նվազում։

IV. Թվայնացում

7. ամբողջական հարթակ
Հայցադիմում, միջնորդություն, բողոք՝ միայն էլեկտրոնային,
Ավտոմատ գործերի բաշխում։

8. AI՝ դատական բեռնաթափման համար
Նույնատիպ գործերի խմբավորում
Նախադեպերի ավտոմատ առաջարկ դատավորին
Դատավորը մնում է որոշում կայացնողը, AI-ն՝ օգնական։

V. Կադրային և էթիկական ռեֆորմներ
9. Դատավորների գնահատման նոր մոդել
Չափանիշներ՝
ժամկետների պահպանում
վերադաս ատյանի կողմից չեղարկումների տոկոս
դատական ակտի հիմնավորվածություն

10. Վեթինգ՝ ոչ ցուցադրական, այլ իրավական
Անկախ հանձնաժողով
Ոչ թե «վրեժ», այլ՝ մաքրում և վստահության վերականգնում

VI. Իրավաբանական համայնքի դերը։
Եթե դատարանը ծանրաբեռնված է, նշանակում է՝ պետությունը վստահված չէ կանխարգելմանը։

ՈՒՂԵՐՁ ԸՆՏՐՈՂԻՆ՝ Լավ դատարանը այն չէ, որտեղ շատ գործեր են քննվում, այլ այն, որտեղ քիչ գործեր են առաջանում։

Դատախազության փտած համակարգի արդիականացման ծրագրային դրույթներ

I. Դատախազը պետք է վերածվի ոչ թե վերադասին զեկուցող վարչական պաշտոնյայի, այլ՝ իրավական սուբյեկտի, որը.
ինքն է որոշում մեղադրանքի հաստատումը,
ինքն է կրում մեղադրանքի պաշտպանման պատասխանատվությունը դատարանում,
գործում է օրենքի և խղճի առաջ, ոչ թե վերադասի կամ համակարգի վախի ներքո։

Այս մոդելով դատախազը դառնում է իրավունքի պահապան, ոչ թե քրեական քաղաքականության գործիք։

II. Գործով դատախազի ինստիտուցիոնալ անկախություն
1. Գործով դատախազի լիազորություններ
Օրենսդրորեն ամրագրել, որ գործով դատախազը՝
ինքնուրույն է մեղադրանքի հարուցման, մեղադրանքի փոփոխման, մեղադրանքից հրաժարվելու հարցում,

իրավունք ունի դատարանում ներկայացնել այն դիրքորոշումը, որը ինքն է ձևավորել,
չի պարտավորվում որևէ փուլում զեկուցել վերադաս դատախազին իր իրավական գնահատականի մասին։

Վերադաս դատախազը չի կարող.
պարտադրել մեղադրանքի հաստատում,
պարտադրել մեղադրանքի պաշտպանություն,
կամ չեղարկել գործով դատախազի իրավական դիրքորոշումը։

III. Վերադաս դատախազի դերակատարության սահմանափակում
Վերադաս դատախազը.
չի միջամտում կոնկրետ գործերին,
չի տալիս պարտադիր ցուցումներ գործով դատախազին,
ունի միայն ընդհանուր քաղաքականության, մեթոդաբանության, որակի վերահսկման իրավասություն (առանց գործի բովանդակության)։
Այսպիսով վերացվում է <զեկուցողական դատախազության> մոդելը։

IV. Մեղադրանքի հաստատում և պաշտպանություն դատարանում
Նոր սկզբունք
Մեղադրանքը դատարանում պաշտպանում է միայն այն դատախազը, ով անձամբ է այն հաստատել։
Եթե դատախազը գտնում է, որ մեղադրանքը չի ապացուցվում, պարտավոր է հրաժարվել դրանից։
Ոչ մի <համակարգային հեղինակություն> չի կարող ստիպել պաշտպանել անօրինական մեղադրանք։
Սա վերջ է դնում <դատարանում պարտադիր մեղադրանքի> ինստիտուտին։

V. Դատախազության ղեկավարի ընտրության մոդել
1. Ընտրություն Ազգային ժողովի կողմից, բայց հաշվետու իշխող կոսակցությանը։
Դատախազության ղեկավարը ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ բարձր լեգիտիմություն ապահովելու նպատակով։
Ընտրությունը քաղաքական է՝ բաց և հրապարակային քննարկմամբ։
2. Բայց հաշվետվողականություն՝ բացառապես իշխանության կուսակցությանը,ոչ թե ազգային ժողովին կամ այլ պետական մարմնին։

Առաջարկած սկզբունքը խիստ կարևոր է և նորարարական.
Դատախազության ղեկավարը.
հաշվետու չէ Ազգային ժողովին որպես մարմին,
չի ենթարկվում խորհրդարանական հարցաքննություններին,
չի կարող հեռացվել ընդդիմադիր քվեարկությամբ,
հաշվետու է միայն իշխող քաղաքական ուժին, քանի որ.
իշխանությունը կրում է հանրային պատասխանատվություն քրեական քաղաքականության համար,
դատախազությունը չի կարող լինել <քաղաքականապես անպատասխանատու> մարմին։

VI. Քաղաքական պատասխանատվություն՝ առանց գործային միջամտության
Սահմանել հստակ բաժանում.
Քաղաքական պատասխանատվություն դատախազության ընդհանուր ուղղության համար
Գործային անկախություն յուրաքանչյուր առանձին քրեական գործի համար

Այս երկակի մոդելը կանխում է.
քաղաքական ճնշումը կոնկրետ գործերի վրա,
բայց նաև վերացնում է ,անկառավարելի դատախազությանե վտանգը։

VII. Կարգապահական պատասխանատվության նոր մոդել
Գործով դատախազը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության, եթե.
նրա որոշումը հիմնված է իրավական համոզմունքի վրա,
նույնիսկ եթե գործը ավարտվել է արդարացմամբ կամ կարճմամբ։
Պատասխանատվություն կարող է լինել միայն՝
ակնհայտ ապօրինության, կոռուպցիոն վարքագծի, կամ ապացուցված չարաշահման դեպքում։

VIII. Սպասվող արդյունքները
Այս ռեֆորմների արդյունքում՝
դատախազը դառնում է հեղինակություն,
դատարանը ստանում է իրական հակառակ կողմ,
քաղաքացին տեսնում է արդարության մարմին, ոչ թե ճնշման գործիք,
վերանում են, քաղաքական պատվերե մեղադրանքները,
քրեական արդարադատության վստահությունը բարձրանում է։

ՈՒՂԵՐՁ ԸՆՏՐՈՂԻՆ՝ Դատախազը պետք է լինի ոչ վերադասի ծառա, ոչ դատարանի հավելում, այլ՝ օրենքի պահպանման հսկողություն իրականացնող սուբյեկտ և բացառապես հաշվետու է իշխող կուսակցության առաջ։

ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

I. Ընդհանուր հայեցակարգ

Քննչական մարմինների գործունեության հիմքում դրվում է հետևյալ սկզբունքը՝
քննիչը ծառայում է բացառապես Օրենքին և Ճշմարտությանը, և ոչ՝ վարչական կամ քաղաքական շահերին։

Քննչական համակարգը կառուցվում է երկու հստակ ուղղություններով՝
1. Ընդհանուր քրեական և տնտեսական գործերի քննություն
2. Ազգային անվտանգության հետ կապված գործերի քննություն։

II. **Քննչական մարմիններ՝ Դատախազությանը կից**

1. Իրավական կարգավիճակ

Քննչական մարմինները գործում են Դատախազությանը կից
Դատախազությունը իրականացնում է՝
մեղադրանքի հաստատում, օրինականության վերահսկողություն
Դատախազը չունի միջամտության իրավունք կոնկրետ քննչական գործողությունների ընթացքին։

2. Քննիչի անկախություն

Քննիչը՝անկախ է գործի քննության շրջանակում, չի զեկուցում վերադասին՝ մեղադրանք առաջադրելու, գործ կարճելու, վարույթ նախաձեռնելու կամ մերժելու վերաբերյալ։
Ենթարկվում է միայն՝ Սահմանադրությանը, օրենքին, դատարանի օրինական ակտերին
Արգելվում է ցանկացած քաղաքական կամ վարչական միջամտություն քննիչի որոշումներին։

3. Պատասխանատվության ինստիտուտ

Քննիչը կրում է անձնական և ինստիտուցիոնալ պատասխանատվություն՝ ապօրինի քրեական հետապնդման, ապացույցների կեղծման, գործի դիտավորությամբ ձգձգման։

III. Ազգային անվտանգության քննչական մարմին (ԱԱՔՄ)

1. Իրավական կարգավիճակ

Ստեղծվում է առանձին քննչական մարմին, որը գործում է
Ազգային անվտանգության ծառայությանը կից,
սակայն ունի առանձին իրավական սուբյեկտայնություն։

2. Հաշվետվողականություն

ԱԱԾ ՔՄ-ն հաշվետու է՝
գործող իշխանական կուսակցությանը (քաղաքական վերահսկողություն)
Դատախազությանը (օրինականության վերահսկողություն)
Սակայն՝ որևէ մարմին չի կարող ուղղակի ցուցում տալ կոնկրետ գործի
քննության վերաբերյալ։

3. **Գործառույթների շրջանակ**

ԱԱԾ ՔՄ-ն իրականացնում է քննություն՝
պետական դավաճանություն
լրտեսություն
ահաբեկչություն
սահմանադրական կարգի բռնի տապալում
արտաքին հատուկ ծառայությունների ներգործություն։

IV. Ինստիտուցիոնալ երաշխիքներ

1. Վերահսկողություն և հաշվետվություն

Ազգային ժողովում ձևավորվում է՝
Քննչական և անվտանգության վերահսկողության հանձնաժողով
Ամենամյա փակ զեկույց՝
քննությունների քանակ
կարճված գործեր
արդարացման դատավճիռների տոկոս

2. Հանրային վստահություն

Քննչական մարմինների գործունեության հիմքում դրվում է
«ավելի լավ է արդարացվի անմեղը, քան դատապարտվի անմեղը»
սկզբունքը
Բաց տվյալների հարթակ (առանց գաղտնիքի խախտման)

V. Սահմանադրական և քաղաքական նպատակ

Այս մոդելի նպատակն է՝ վերջ դնել քրեական գործերի քաղաքական
օգտագործմանը, ձևավորել ինքնուրույն, բայց հաշվետու քննիչ
վերականգնել հանրային վստահությունը պետության նկատմամբ

ՈՒՂԵՐՁ ԸՆՏՐՈՂԻՆ՝ Օրենքի ուժը ոչ թե վախեցնելու, այլ պաշտպանելու համար է։

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

(Հեղինակություն – Վստահություն – Համայնք)

Ի. ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ոստիկանության նոր դոկտրինա

Ոստիկանությունը այլևս չի ընկալվում որպես պատժիչ կամ հրահանգային մարմին,
այլ՝ որպես հասարակության անվտանգության ծառայող ինստիտուտ։
Բանաձևը.

«Ոստիկանն իշխանության ձեռքը չէ ժողովրդի դեմ,
այլ օրենքի ձեռքն է՝ ժողովրդի պաշտպանության համար»։

2. Հեղինակության չափանիշները։

Ոստիկանի հեղինակությունը պետք է բխի ոչ թե վախից, այլ՝
իրավական գիտելիքից
անձնական բարոյականությունից
կանխատեսելի և արդար վարքագծից
հանրային հաշվետվողականությունից

ԻԻ. ՇԵՐԻՖԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ)

1. Շերիֆի ինստիտուտի գաղափարը

Շերիֆը համայնքի ընտրված կամ հաստատված անվտանգության ներկայացուցիչն է, որը՝
ճանաչում է համայնքի բնակիչներին
պատասխանատու է տվյալ տարածքի անվտանգության համար
գործում է ոչ միայն քրեական, այլ նաև սոցիալական կանխարգելման դաշտում։

2. Շերիֆի կարգավիճակը

Շերիֆը՝ հանդիսանում է ոստիկանության հատուկ ստորաբաժանման ղեկավար համայնքում

ունի ծառայողական անկախություն օպերատիվ հարցերում
հաշվետու է և՛ ոստիկանությանը, և՛ համայնքին և իշպող կուսակցությանը։

3. Շերիֆի լիազորությունները
Շերիֆը իրավասու է՝
կանխարգելել իրավախախտումները,միանձնյա որոշումներ
կայացնել,առանց գլավկին տեղեկացնելու պարտավորության։
մասնակցել համայնքային վեճերի հաշտեցմանը
ղեկավարել տեղական պարեկային ծառայությունը
ներկայացնել համայնքի անվտանգության հաշվետվություն
նախաձեռնել սոցիալական ռիսկերի քարտեզավորում,օպերատիվ
հետախուզական գիտական ինստիտուտ,ամենօրյա պրոֆիլակտիկ
աշպառանք։

III. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ (ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱ)
Ա. 1. Քաղաքացիական անվտանգության գլխավոր վարչություն
ռազմավարություն
ստանդարտներ
վերահսկողություն
2. Ոստիկանության ներքին վերահսկողության անկախ ծառայություն
ենթակա չէ ոստիկանապետին
հաշվետու է խորհրդարանին / օմբուդսմենին
3. Ոստիկանության կրթական ակադեմիա (նոր մոդել)
պարտադիր էթիկա
մարդու իրավունքներ
հոգեբանություն
հաղորդակցություն հասարակության հետ։

Բ. Տարածքային (համայնքային) մակարդակ
1. Համայնքային շերիֆների ծառայություն
յուրաքանչյուր համայնք կամ խոշոր թաղամաս ունի իր շերիֆը
շերիֆի աշխատակազմը փոքր է, բայց բարձր պատրաստված։
2. Պարեկային ծառայություն (շերիֆին ենթակա)
ոչ թե պատժիչ, այլ կանխարգելիչ
մշտական շփում բնակչության հետ
3. Համայնքային անվտանգության խորհուրդ
Շերիֆ, համայնքի ղեկավար, դպրոց, եկեղեցի, ՀԿ ներկայացուցիչներ
քննարկում են անվտանգության խնդիրները

IV. ՈՍՏԻԿԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

1. Կադրային զտում

բարոյահոգեբանական գնահատում
ապօրինի բռնության զրո հանդուրժողականություն
բացառում՝ կոռուպցիոն անցյալ ունեցող անձանց

2. Ոստիկանի սոցիալական երաշխիքներ

արժանապատիվ աշխատավարձ
ապահովագրություն
հոգեբանական աջակցություն
ծառայողական բնակարան (համայնքներում)
Ոստիկանը չպետք է լինի սոցիալապես խոցելի։

3. Հանրային հաշվետվողականություն

տարեկան բաց հաշվետվություն համայնքին,իշխող կուսակցությանը։
հանրային լսումներ
քաղաքացիների գնահատման մեխանիզմ։

V. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. «Ոստիկան–քաղաքացի» սոցիալական պայմանագիր

հստակ իրավունքներ
հստակ պարտականություններ
փոխադարձ պատասխանատվություն

2. Տեսանելիություն

ոստիկանը ճանաչելի է անունով, ոչ թե համարով
մշտական ներկայություն, ոչ թե միայն միջադեպի ժամանակ։

3. Կրթական ծրագրեր

դպրոցներում՝ «իմ իրավունքները և ոստիկանությունը»
համայնքներում՝ բաց հանդիպումներ։

VI. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (ԹԻՐԱԽԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ)

Քրեականության նվազում ոչ թե բռնությամբ, այլ կանխարգելմամբ
Ոստիկանի նկատմամբ վախի փոխարեն՝ հարգանք
Համայնքում՝ անվտանգության սուբյեկտիվ զգացողության աճ
Ոստիկանությունը՝ որպես ծառայություն, ոչ թե ճնշման գործիք

ՈՒՂԵՐՁ ԸՆՏՐՈՂԻՆ՝ Երբ ժողովուրդը ոստիկանության մեջ տեսնում է իր զավակին, ոստիկանը դադարում է լինել իշխանության վահանը և դառնում է օրենքի կենդանի դեմքը։

Մարզերի կառավարման ամբողջական մոդել

1. Ընդհանուր փիլիսոփայություն
Մոդելի հիմքում դրվում են հետևյալ սկզբունքները.
Վարչատարածքային ապակենտրոնացման փոխարեն՝ տնտեսական կենտրոնացում
Քաղաքական պատասխանատվության հստակեցում
Վարչարարության կրճատում և արագ որոշումների ընդունում
Տնտեսական զարգացման ուղղակի կառավարում կենտրոնից
Մոդելը նպատակ ունի վերացնել երկակի իշխանությունը (մարզպետ–համայնք) և ստեղծել մեկ գիծ պատասխանատվության

2. Մարզպետարանների լուծարում
2.1. Իրավական կարգավիճակ
Մարզպետարանները լուծարվում են ամբողջությամբ
Մարզերը դադարում են գործել որպես առանձին վարչական օղակ
Մարզային բյուջեներ, հաստիքացուցակներ և լիազորություններ վերացվում են
2.2. Հետևանք
Վերանում է միջանկյալ օղակը՝ «կենտրոնական իշխանություն – համայնք»
Պետական ռեսուրսների բաշխումը դառնում է ուղղակի և վերահսկելի

3. Համայնքների ղեկավարների նշանակման համակարգ
3.1. Կարգավիճակ
Համայնքների ղեկավարները դառնում են նշանակովի
Նշանակումը իրականացվում է կառավարության որոշմամբ
3.2. Ենթակայություն
Համայնքի ղեկավարները ենթարկվում են բացառապես վարչապետի տնտեսական հարցերով տեղակալին
Չկա այլ նախարարական կամ միջանկյալ վերահսկողություն
3.3. Լիազորություններ
Տեղական տնտեսական ծրագրերի իրականացում
Համայնքային գույքի կառավարում
Ներդրումային նախագծերի տեղային սպասարկում
Սոցիալ-տնտեսական ցուցանիշների ապահովում
Քաղաքական նախաձեռնության իրավունք չունեն, գործում են որպես կառավարման մենեջերներ։

4. Վարչապետի տնտեսական հարցերով տեղակալի բացառիկ դերակատարումը

4.1. Կենտրոնական ֆիգուր

Վարչապետի տնտեսական հարցերով տեղակալը դառնում է՝
Համայնքների միակ վերադաս ղեկավարող սուբյեկտը
Տնտեսական քաղաքականության միասնական պատասխանատուն ամբողջ երկրում

4.2. Գործառույթներ

Համայնքների ղեկավարների նշանակում և ազատում
Տարածքային ներդրումային քաղաքականության հաստատում
Տնտեսական KPI-ների սահմանում յուրաքանչյուր համայնքի համար
Պետական–մասնավոր համագործակցության համակարգում։

5. Տարածքային կառավարման նախարարության լուծարում

5.1. Լուծարման հիմք

Մարզպետարանների բացակայության պայմաններում նախարարությունը կորցնում է իր իմաստը
Գործառույթները կրկնվում են կամ դառնում են ավելորդ

5.2. Գործառույթների վերաբաշխում

Գործառույթ՝ Նոր կրող
Տարածքային տնտեսական ծրագրեր՝ Վարչապետի տնտեսական տեղակալ
Համայնքային վերահսկողություն՝ Իշխանական կուսակցություն
Վարչարարություն՝ Համայնքի ղեկավար

6. Իշխանական կուսակցության վերահսկողական մեխանիզմը

6.1. Կուսակցական ներկայացուցիչ համայնքում

Յուրաքանչյուր համայնքում գործում է իշխանական կուսակցության պաշտոնական ներկայացուցիչ
Չի մտնում համայնքի ղեկավարի ենթակայության տակ

6.2. Լիազորություններ

Վերահսկել կառավարության քաղաքականության իրականացումը
Զեկուցել կուսակցության ղեկավար մարմնին
Ֆիքսել շեղումները, չարաշահումները, հանրային դժգոհությունները
Կուսակցական-քաղաքական վերահսկողություն առանց վարչարարության

6.3. Համայնք

Կուսակցության տարածքային համակարգ
Կուսակցության կենտրոնական մարմին

7. Պատասխանատվության հստակ բաշխում
Տնտեսական արդյունք վարչապետի տնտեսական տեղակալ
Վարչարարական կատարում համայնքի ղեկավար
Քաղաքական վերահսկողություն իշխանական կուսակցություն
Կառավարական ռազմավարություն Հայաստանի Հանրապետության կառավարություն:

8. Մոդելի առավելություններ
Վերանում է մարզային բյուրոկրատիան
Կրճատվում են ծախսերը
Պատասխանատվությունը դառնում է անձնավորված
Տնտեսական քաղաքականությունը դառնում է արագ և ուղղահայաց

ՈՒՂԵՐՁ ԸՆՏՐՈՂԻՆ՝ Իշխանական կուսակցությունը կրում է իրական քաղաքական պատասխանատվություն:

<u>ԳՅՈՒՄՐԵՑԻ՛,</u>
Տասնամյակներով քեզ խոստումներ են տվել:
Գալիս էին, խոսում էին «զարգացումից», նկարվում էին ավերակների ֆոնին, ու հեռանում:
Իսկ Գյումրին մնում էր նույն ցավով, նույն գործազրկությամբ, նույն անարդարությամբ:

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
մենք Գյումրիի համար խոսում ենք ոչ թե լոզունգներով,
այլ կոնկրետ ծրագրերով:

📌 Գյումրիում ստեղծվելու է՝
թեթև արդյունաբերական մեծ կենտրոն՝ կարի, տեքստիլի, կոշիկի, կահույքի, շինանյութերի արտադրությամբ:
Գյումրեցի երիտասարդը այլևս չի մեկնելու արտագնա աշխատանքի՝ իր ընտանիքը պահելու համար:

📌 Գործարկվելու են՝
պետական մասնակցությամբ գործարաններ,
որտեղ առաջնահերթ աշխատանքի են ընդունվելու
գյումրեցի երիտասարդները, զոհված ու հաշմանդամ զինվորների
ընտանիքների անդամները, երկար տարիներ գործազուրկ մնացած
քաղաքացիները։

📌 Գյումրին դառնալու է՝
Հայաստանի հյուսիսային տեխնոլոգիական կենտրոններից մեկը։
Բացվելու են անվճար ուսումնական կենտրոններ՝
ծրագրավորման, ինժեներիայի, արհեստների ու արտադրական
մասնագիտությունների համար։

📌 Լուծվելու է տնակների հարցը։
Ոչ թե հերթական կեղծ ծրագրերով,
այլ պետական պարտադիր ծրագրով։
Տասնամյակներով տնակում ապրող մարդը պետք է վերջապես ապրի
մարդու նման պայմաններում։

📌 Վերակառուցվելու են՝
Գյումրիի բակերը, փողոցները, ջրագծերը, լուսավորությունը, կոյուղին։
Ոչ թե ընտրությունից ընտրություն ասֆալտ լցնելով, այլ ամբողջական
քաղաքաշինական ծրագրով։

📌 Գյումրիում ներդրվելու է՝
հարկային արտոնությունների հատուկ ռեժիմ, որպեսզի ներդրողը
շահագրգռված լինի արտադրություն բացել հենց Գյումրիում։

📌 Գյումրեցի թոշակառուն չի ապրելու ողորմությամբ։
Քաղաքում գործելու են սոցիալական անվճար բժշկական կենտրոններ,
դեղորայքային աջակցություն, մենակ տարեցների խնամքի ծրագրեր։

📌 Աջակցություն է տրվելու՝
Գյումրիի մշակույթին, արվեստին, հումորին ու ինքնությանը։
Գյումրին պարզապես քաղաք չէ։
Դա հայկական ոգու առանձին աշխարհ է։

Մենք չենք եկել Գյումրիից ձայն խնդրելու։
Մենք եկել ենք Գյումրիի հետ միասին պետություն կառուցելու։

Գյումրեցին գիտի՝
երբ մարդը խոսք է տալիս, պետք է տղամարդու նման պահի այդ խոսքը։

Ուղերձ Գյումրեցուն՝ Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ Գյումրին այլևս չի լինելու մոռացված քաղաք։ Գյումրին դառնալու է Արևային Հայաստանի հպարտությունը։

ՍՅՈՒՆԻ՛Ք,
Դու պարզապես մարզ չես։
Դու Հայաստանի ողնաշարն ես։
Դու սահման ես, ուժ ես, հանք ես, ճանապարհ ես,
բայց ամենակարևորը՝ դու արժանապատիվ ու կռվող մարդու հայրենիք ես։

Տարիներով Սյունիքը օգտագործել են։
Քեզնից վերցրել են հարստություն, բայց քիչ են վերադարձրել ժողովրդին։
Քո ընդերքը շահագործել են, իսկ սյունեցին հաճախ մնացել է աղքատ,
ճանապարհները՝ կիսաքանդ,
գյուղերը՝ դատարկվող,
երիտասարդը՝ արտագաղթի ճանապարհին։

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ Սյունիքի նկատմամբ լինելու է բոլորովին նոր պետական քաղաքականություն։

📌 ՍՅՈՒՆԻՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
Սյունիքը չի կարող մնալ միայնակ։
Սահմանամերձ գյուղերում կառուցվելու են նոր պաշտպանական ենթակառուցվածքներ, ապաստարաններ, ինժեներական անվտանգության գծեր։ Սահմանապահ գյուղերի բնակիչները ստանալու են հարկային, վարկային և սոցիալական հատուկ արտոնություններ։

📌 ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ՝ ՈՉ ԹԵ ԹԱԼԱՆ, ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀ
Սյունիքի հանքերը ծառայելու են Հայաստանին, ոչ թե մի քանի օլիգարխի։
Հումքը այլևս կույր ձևով դուրս չի տարվելու երկրից։
Սյունիքում ստեղծվելու են վերամշակող գործարաններ, պղնձի, մոլիբդենի և այլ մետաղների պատրաստի արտադրանք արտադրող համալիրներ։
Այսինքն՝ աշխատատեղերը մնալու են Սյունիքում,
հարկերը մնալու են Հայաստանում,
շահույթը ծառայելու է ժողովրդին։

📌 ԿԱՊԱՆ — ՄԵՂՐԻ — ԳՈՐԻՍ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԶՈՐ ԳՈՏԻ
Ստեղծվելու է՝ Սյունիքի տնտեսական հատուկ գոտի՝ արտադրության և ներդրումների համար հատուկ հարկային ռեժիմով։
Մեղրին դառնալու է՝ միջազգային առևտրային և լոգիստիկ հանգույց։

📌 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ
Սյունեցին պետք է ապրի իր հողի բերքից, ոչ թե պարտքերից։
Պետությունն ապահովելու է՝
անվճար կամ սուբսիդավորված ոռոգման ծրագրեր, էժան վառելիք գյուղացու համար, գյուղտեխնիկայի հասանելիություն, պետական երաշխավորված մթերում։

📌 ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
Սյունիքի ճանապարհները պետք է լինեն ռազմավարական մակարդակի։
Վերակառուցվելու են մարզային ու գյուղական ճանապարհները, ջրագծերը, էներգետիկ ենթակառուցվածքները, ինտերնետային կապը։

📌 ՍՅՈՒՆԵՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ՊԵՏՔ Է ԱՊՐԻ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
Բացվելու են՝ տեխնոլոգիական, ռազմական, ինժեներական կրթական կենտրոններ։
Սյունիքում ստեղծվելու են՝ բարձր վարձատրվող աշխատատեղեր, որպեսզի երիտասարդը չլքի հայրենի տունը։

📌 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
Սյունիքի թոշակառուն, ուսուցիչը, բժիշկը, զինվորի ընտանիքը պետք է ապրեն արժանապատիվ։

Պետությունը պարտավոր է ոչ թե աղքատ պահել ժողովրդին նպաստներով, այլ ստեղծել պայմաններ՝ ուժեղ ու ապահով ապրելու համար։

ՍՅՈՒՆԻ՛Ք,
ժամանակն է, որ քեզ այլևս չնայեն միայն քարտեզի վրա,
այլ տեսնեն որպես Հայաստանի ապագայի հենասյուն։

Ուղերձ Սյունեցուն՝ Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
կառուցելու ենք Արևային Հայաստան,
որտեղ Սյունիքը լինելու է
ոչ թե վտանգի գոտի,
այլ ազգային հզորության խորհրդանիշ։

ՎԱՅՈՑ ՁՈ՛Ր,
Դու պարզապես մարզ չես։
Դու քարից ծնված ուժ ես։
Դու լեռների համառություն ես, խաղողի բույր ես, հին վանքերի զանգակ ես, աղբյուրների սառնություն ես, ու այն հայի տեսակն ես, որ քիչ է խոսում, բայց ամուր է կանգնում իր հողի վրա։

Բայց տարիներով
Վայոց Ձորը մնաց մոռացված։
Քո ճանապարհներով զբոսաշրջիկ անցավ,
քո գինին խմեցին աշխարհի տարբեր երկրներում,
բայց հենց վայոցձորցին հաճախ մնաց
գործազուրկ, չլսված ու անտեսված։

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
Վայոց Ձորի նկատմամբ լինելու է
առանձին պետական զարգացման ռազմավարություն՝
հաշվի առնելով մարզի լեռնային ռելիեֆը,
բնությունը, գյուղատնտեսական հնարավորությունները
և զբոսաշրջային բացառիկ ներուժը։

📌 ՎԱՅՈՑ ՁՈՐԸ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԵՆԻ-ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՎ
Վայոց Ձորի խաղողագործն ու գինեգործը պետք է դառնան պետության հատուկ պաշտպանության ներքո գտնվող արտադրողներ։

Ստեղծվելու են՝
պետական աջակցությամբ գինու գործարաններ,
մթերման երաշխավորված համակարգ,
արտահանման պետական ծրագրեր։

**«Արենի» անունը պետք է դառնա համաշխարհային բրենդ,
ոչ թե պարզապես գյուղի անուն։**

📌 ԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԵՐԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ
Վայոց Ձորի բազմաթիվ գյուղեր դատարկվում են ճանապարհների, աշխատանքի և պայմանների բացակայությունից։

Կառուցվելու են՝
լեռնային գյուղերին հարմարեցված ճանապարհներ,
ջրագծեր, արևային էներգիայի համակարգեր,
բարձր արագության ինտերնետ։

Պետությունը հատուկ աջակցություն է տրամադրելու
այն ընտանիքներին, որոնք ապրում ու աշխատում են սահմանամերձ և բարձրադիր գյուղերում։

📌 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ՝ ՈՉ ԹԵ ՊԱՏԱՀԱԿԱՆ, ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Ջերմուկը, Արենին, Նորավանքը, Սմբատաբերդը, Հերմոնը
պետք է դառնան միջազգային զբոսաշրջային ուղղություններ։

Ստեղծվելու են՝
լեռնային տուրիզմի, էկոտուրիզմի, բուժական տուրիզմի հատուկ կենտրոններ։

Վայոց Ձորի երիտասարդը պետք է գումար վաստակի իր հողում,
ոչ թե օտար երկրում շինարարություն անելով։

📌 ՋԵՐՄՈՒԿ՝ ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
Ջերմուկը կրկին դառնալու է ողջ տարածաշրջանի առողջարանային մայրաքաղաքներից մեկը։

Կառուցվելու են՝
նոր առողջարաններ,
վերականգնողական բժշկական կենտրոններ,
միջազգային մակարդակի հյուրանոցային համալիրներ։

📌 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՌԵԼԻԵՖԸ
Վայոց Ձորի լեռնային պայմանները պահանջում են հատուկ մոտեցում։

Պետությունը տրամադրելու է՝
կաթիլային ոռոգման համակարգեր,
լեռնային տեխնիկա,
անասնապահության պետական ծրագրեր,
մեղվաբուծության և դեղաբույսերի արտադրության աջակցություն։

📌 ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ
Ոչ ոք իրավունք չի ունենալու կործանել Վայոց Ձորի սարերը, անտառները, ջրերը հանուն կարճաժամկետ շահույթի։
Բնապահպանությունը լինելու է պետական անվտանգության մաս։

📌 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ
Վայոցձորցի ուսուցիչը, բժիշկը, զինվորը, թոշակառուն պետք է ապրեն արժանապատիվ կյանքով։

Պետությունը պարտավոր է ուժեղացնել մարզային հիվանդանոցները, դպրոցները, մշակութային կենտրոնները։

<u>ՈՒՂԵՐՁ ՎԱՅՈՑ ՁՈ՛Ր Ի ԸՆՏՐՈՂԻՆ՝</u>
<u>քո լեռները սովորեցրել են հայ մարդուն դիմանալ, չկոտրվել, վեր բարձրանալ։</u>

<u>Ժամանակն է, որ պետությունն էլ քեզ վերաբերվի արժանապատվությամբ։</u>

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
կառուցելու ենք Արևային Հայաստան,
որտեղ Վայոց Ձորը լինելու է
ոչ թե մոռացված լեռնային մարզ,
այլ հայկական ուժի, բնության ու զարգացման խորհրդանիշ:

ՏԱՎՈՒ՛Շ,
Դու Հայաստանի կանաչ սիրտն ես:
Դու անտառի շունչն ես,
սահմանապահ զինվորի կամքն ես,
դու խաղողի այգին ես, մեղվի բույնն ես,
լեռների մեջ ապրող հպարտ հայն ես,
որ ամեն օր նայում է վտանգին աչքերի մեջ,
բայց չի լքում իր հողը:

Տարիներով Տավուշին նայել են
միայն որպես սահմանային խնդիր ունեցող մարզի:
Բայց Տավուշը խնդիր չէ:
Տավուշը Հայաստանի ապագայի հսկայական հնարավորություն է:

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
Տավուշի համար իրականացվելու է
առանձին սոցիալ-տնտեսական և ռազմավարական զարգացման ծրագիր,
որտեղ հաշվի են առնվելու
մարզի բնությունը, աշխարհագրությունը, սահմանային դիրքը և
տնտեսական ներուժը:

📌 ՏԱՎՈՒՇ — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Տավուշի զարգացման գերակա ճյուղերն են լինելու՝
▪ գյուղատնտեսություն
▪ գինեգործություն և պահածոյացում
▪ մեղվաբուծություն
▪ անտառային տնտեսություն
▪ զբոսաշրջություն

▪ վերամշակող արդյունաբերություն
▪ տեխնոլոգիական կրթություն և հեռավար աշխատանք

📌 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ — ՏԱՎՈՒՇԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ
Տավուշի բերքը պետք է հարստացնի հենց տավուշցուն։
Պետությունը ստեղծելու է՝
մթերման պետական երաշխավորված համակարգ,
սառնարանային տնտեսություններ,
պահածոների և չրերի արտադրամասեր,
էժան գյուղվարկեր և գյուղտեխնիկայի հասանելիություն։
Տավուշի խաղողը, դեղձը, ընկույզը, մեղրը
պետք է արտահանվեն հայկական պետական բրենդով։

📌 ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Տավուշը դառնալու է
Հայաստանի օրգանական գյուղատնտեսության կենտրոններից մեկը։

Մարզում պետական աջակցությամբ զարգացվելու են՝
մեղվաբուծությունը,
էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրությունը,
դեղաբույսերի մշակումը։

📌 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ — ՏԱՎՈՒՇԻ ՈՍԿԵ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
Դիլիջանը, Իջևանը, Հաղարծինը, Գոշավանքը, Ենոքավանը
պետք է դառնան միջազգային զբոսաշրջային ուղղություններ։

Զարգացվելու են՝
էկոտուրիզմը,
լեռնային տուրիզմը,
առողջարանային և ընտանեկան հանգիստը։

Կառուցվելու են՝
նոր հյուրանոցներ, զբոսաշրջային ուղիներ, ճոպանուղիներ, հանգստյան գոտիներ։

📌 ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԵՐ — ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ
Բերդը, Նոյեմբերյանը և սահմանամերձ գյուղերը
չեն մնալու միայնակ։

Սահմանամերձ բնակիչները ստանալու են՝
հարկային արտոնություններ,
արտոնյալ վարկեր,
անվտանգության նոր համակարգեր,
երիտասարդ ընտանիքների բնակարանային ծրագրեր։

📌 ԱՆՏԱՌՆԵՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ
Տավուշի անտառները չեն դառնալու թալանի աղբյուր։

Անտառահատումների նկատմամբ լինելու է խիստ պետական
վերահսկողություն։

Միաժամանակ զարգացվելու է անտառային տնտեսությունը՝
օրինական և վերահսկվող օգտագործման սկզբունքով։

📌 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ
Տավուշի երիտասարդը
պետք է հնարավորություն ունենա
աշխատելու միջազգային շուկայի համար՝
առանց հայրենի մարզը լքելու։

Բացվելու են՝
ծրագրավորման, ինժեներիայի, դիզայնի ուսումնական կենտրոններ,
հեռավար աշխատանքի հաբեր։

📌 ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
Վերակառուցվելու են՝
գյուղական ճանապարհները,
ոռոգման ցանցերը,
խմելու ջրի համակարգերը,
բուժկետերը և դպրոցները։

📌 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ
Տավուշցի ուսուցիչը, բժիշկը, զինվորի ընտանիքը, գյուղացին
պետք է զգան, որ պետությունն իրենց կողքին է։

Ոչ թե խոսքերով,
այլ իրական կյանքով։

ՈՒՂԵՐՁ ՏԱՎՈՒՇԻՆ՝
քո անտառների պես ամուր է քո ոգին։
Քո սահմանների պես ամուր պետք է լինի նաև պետությունը։

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
կառուցելու ենք Արևային Հայաստան,
որտեղ Տավուշը լինելու է
ոչ թե մոռացված սահման,
այլ Հայաստանի հզոր զարգացման դարպասներից մեկը։

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ՛Ք,
Դու պարզապես մարզ չես։
Դու Սևանի կապույտ հայելին ես,
դու լեռների մեջ ապրող համառ մարդն ես,
դու ձկնորսի ձեռքն ես,
հողի վրա կռացած գյուղացու ճակատի քրտինքն ես,
դու այն սահմանապահ հայն ես,
որ ամեն օր ապրում է վտանգի կողքին,
բայց չի լքում իր տունը։

Տարիներով քեզ խոստացել են զարգացում,
բայց իրականում քեզ թողել են աղքատության, գործազրկության
ու անտարբերության մեջ։
Սևանը թալանել են, գյուղացին մնացել է մենակ,
երիտասարդը՝ արտագաղթի ճանապարհին։

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
Գեղարքունիքի նկատմամբ իրականացվելու է
հատուկ սոցիալ-տնտեսական զարգացման պետական ծրագիր։

📌 ՍԵՎԱՆԸ՝ ՈՉ ԹԵ ՇԱՀՈՒՅԹԻ ԱՂԲՅՈՒՐ, ԱՅԼ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔ
Սևանը լինելու է պետական պաշտպանության հատուկ գոտի։
Դադարեցվելու է՝
Սևանի անխնա շահագործումը,
ապօրինի ձկնորսությունը,
բնապահպանական հանցագործությունները։

Սևանի ափերը վերածվելու են միջազգային մակարդակի զբոսաշրջային և հանգստի կենտրոնների։

📌 ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԿՆԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
Գեղարքունիքի ձկնորսը պետք է ապրի արժանապատիվ,
ոչ թե մշտական տուգանքների ու կոռուպցիոն ճնշումների տակ։

Ստեղծվելու են՝
պետական վերահսկողությամբ ձկնաբուծական ծրագրեր,
վերամշակող գործարաններ,
արտահանման ուղիներ։

<u>«Սևանի իշխան» անունը պետք է դառնա հայկական որակի համաշխարհային խորհրդանիշ։</u>

📌 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ
Գեղարքունիքի գյուղացին պետք է ապրի իր աշխատանքի արդյունքով։

Պետությունն ապահովելու է՝ էժան վարկեր, սուբսիդավորված վառելիք, գյուղտեխնիկա, անվճար խորհրդատվություն, պետական երաշխավորված մթերում։

Անասնապահությունը, կարտոֆիլի արտադրությունը, մեղվաբուծությունը դառնալու են պետական առաջնահերթություն։

📌 ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԵՐ՝ ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ
Վարդենիսից մինչև Ճամբարակ սահմանապահ գյուղերը այլևս չեն մնալու մենակ։

Կառուցվելու են՝ անվտանգության նոր համակարգեր,
ճանապարհներ, ապաստարաններ, նոր բնակարաններ երիտասարդ ընտանիքների համար։

📌 ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ՉՊԵՏՔ Է ՀԵՌԱՆԱ
Բացվելու են՝ արհեստագործական, տեխնոլոգիական, գյուղատնտեսական ուսումնական կենտրոններ։

Ստեղծվելու են՝ արտադրական փոքր ու միջին ձեռնարկություններ,
որպեսզի երիտասարդը ապագա տեսնի հենց իր մարզում։

📌 ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ, ՋՈՒՐ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
Վերակառուցվելու են՝ մարզային ճանապարհները,
ոռոգման համակարգերը, խմելու ջրի ցանցերը,
գյուղական բուժկետերն ու դպրոցները։

📌 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
Գեղարքունիքի թոշակառուն, ուսուցիչը, զինվորի ընտանիքը, բժիշկը
պետք է զգան պետության ներկայությունը։

Ոչ թե ընտրությունից ընտրություն խոստումներով,
այլ ամենօրյա իրական աջակցությամբ։

📌 ՏՈՒՐԻԶՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
Սևանը, Հայրավանքը, Նորատուսը, Սոթքը, Վարդենիսը
պետք է դառնան հայկական և միջազգային զբոսաշրջության կարևոր ուղղություններ։

Զարգացվելու է էկոտուրիզմը, լեռնային տուրիզմը, ձմեռային հանգիստը,
ազգային խոհանոցն ու մշակույթը։

<u>ՈՒՂԵՐՁ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻՆ,</u>
<u>դու չափազանց երկար ես համբերել։</u>

<u>Ժամանակն է,</u>
<u>որ Սևանի ափին ապրող մարդը</u>
<u>ապրի ոչ թե գոյատևելով,</u>
<u>այլ արժանապատիվ ու ապահով կյանքով։</u>

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
կառուցելու ենք Արևային Հայաստան,
որտեղ Գեղարքունիքը լինելու է
ոչ թե մոռացված սահմանամերձ մարզ,
այլ Հայաստանի հպարտությունը:

ԼՈՌԻ՛,
Դու պարզապես մարզ չես:
Դու աշխատավոր հայի հպարտ ճակատն ես:
Դու Դեբեդի ձայնն ես,
դու հանքագործի ձեռք ես,
դու անտառի բույր ես,
դու վարպետի մուրճի հարվածն ես,
ու այն հայի տեսակն ես,
որ դժվարությունից չի փախչում,
այլ ատամ սեղմած պայքարում է:

Բայց տարիներով
Լոռին թողել են կիսափակ գործարանների,
արտագաղթի, աղքատության ու կիսաքանդ ճանապարհների մեջ:

Մի ժամանակ արդյունաբերական հզոր մարզը
փորձեցին վերածել գոյատևող տարածքի:

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
Լոռու նկատմամբ իրականացվելու է
հատուկ սոցիալ-տնտեսական վերածննդի ծրագիր:

📌 ԼՈՌԻ — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ՀԵՆԱՍՅՈՒՆ
Լոռու զարգացման գերակա ուղղություններն են լինելու՝
▪ արդյունաբերություն և վերամշակում
▪ հանքարդյունաբերության վերահսկվող զարգացում
▪ փայտամշակում և կահույքի արտադրություն

▪ գյուղատնտեսություն և անասնապահություն
▪ զբոսաշրջություն
▪ տրանսպորտ և լոգիստիկա
▪ տեխնոլոգիական կրթություն

📌 ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ

Ալավերդին, Վանաձորը, Սպիտակը
կրկին դառնալու են արտադրական քաղաքներ։

Պետական մասնակցությամբ բացվելու են՝
մետաղի վերամշակման,
շինանյութերի,
կահույքի,
թեթև արդյունաբերության գործարաններ։

Լոռեցին պետք է ապրի իր աշխատանքի արդյունքով,
ոչ թե ճար անելով արտագնա աշխատանքի ճանապարհին։

📌 ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ — ԺՈՂՈՎՐԴԻ ՇԱՀԻ ՀԱՄԱՐ

Լոռու ընդերքը չի ծառայելու միայն մի քանի մարդու հարստացմանը։

Հանքարդյունաբերությունը լինելու է
խիստ բնապահպանական վերահսկողության ներքո,
իսկ շահույթի մի մասը պարտադիր ուղղվելու է
համայնքների զարգացմանը։

📌 ԼՈՌԻՆ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆ

Վրաստան տանող ճանապարհը Լոռին դարձնելու է ռազմավարական
տնտեսական հանգույց։

Կառուցվելու են՝
նոր ճանապարհներ,
բեռնափոխադրման կենտրոններ,
պահեստային համալիրներ։

📌 ԱՆՏԱՌՆԵՐ ԵՎ ՓԱՅՏԱՄՇԱԿՈՒՄ

Լոռու անտառները պետք է ծառայեն ժողովրդին,
ոչ թե ապօրինի թալանին։

Զարգացվելու է՝
օրինական փայտամշակումը,
կահույքի արտադրությունը,
անտառային տնտեսությունը։

📌 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
Լոռու գյուղացին պետք է վստահ լինի վաղվա օրվա վրա։

Պետությունը տրամադրելու է՝
էժան գյուղվարկեր,
անասնապահության պետական ծրագրեր,
կաթի և մսի մթերման երաշխավորված համակարգ։

📌 ՏՈՒՐԻԶՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
Օձունը, Ախթալան, Հաղպատը, Սանահինը, Դսեղը
պետք է դառնան միջազգային զբոսաշրջության կենտրոններ։

Զարգացվելու են՝
էկոտուրիզմը,
լեռնային հանգիստը,
մշակութային տուրիզմը։

📌 ԼՈՌԵՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ՉՊԵՏՔ Է ՀԵՌԱՆԱ
Բացվելու են՝ արհեստագործական և տեխնոլոգիական կենտրոններ,
որպեսզի երիտասարդը կարողանա բարձր աշխատավարձ ստանալ հենց Լոռիում։

📌 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
Լոռու ուսուցիչը, բժիշկը, հանքագործը, շինարարը, թոշակառուն
պետք է ապրեն արժանապատիվ կյանքով։

Պետությունը պարտավոր է
ոչ թե աղքատ պահել ժողովրդին,
այլ ստեղծել ուժեղ ապրելու պայմաններ։

<u>ՈՒՂԵՐՁ ԼՈՌԵՑՈՒՆ՝</u>
<u>դու շատ ես տվել Հայաստանին։</u>
<u>Ժամանակն է, որ Հայաստանն էլ վերադարձնի իր պարտքը քեզ։</u>

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
կառուցելու ենք Արևային Հայաստան,
որտեղ Լոռին լինելու է
ոչ թե մոռացված մարզ,
այլ արդյունաբերական ու ազգային վերածննդի հզոր կենտրոն։

ԱՐԱԳԱԾՈՏ՛Ն,
Դու պարզապես մարզ չես։
Դու Արագածի լռությունն ես,
քարից հաց ստեղծող գյուղացու համառությունն ես,
դու հովվի սուլոցն ես սարերում,
դու այն աշխատասեր հայն ես,
որ ցրտի, ձյան, քամու մեջ
չի լքում իր հողը։

Բայց տարիներով Արագածոտնի մարդը մնաց մենակ իր խնդիրների հետ։
Գյուղացին աշխատեց, բայց ջուր չունեցավ։
Երիտասարդը սովորեց, բայց աշխատանք չգտավ։
Գյուղերը դատարկվեցին, իսկ պետությունը հաճախ միայն ընտրությունից ընտրություն հիշեց մարզի գոյության մասին։

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
Արագածոտնի համար իրականացվելու է
հատուկ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր՝
հաշվի առնելով մարզի լեռնային ռելիեֆը, գյուղատնտեսական ներուժը,
կլիմայական առանձնահատկությունները և ռազմավարական դիրքը։

📌 ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՈՐ ՊԵՏՔ Է ԼՈՒԾՎԵՆ
▪ ոռոգման ջրի պակաս
▪ գյուղերի դատարկում և արտագաղթ
▪ անասնապահության անկում
▪ գյուղմթերքի իրացման խնդիր
▪ ճանապարհների և ենթակառուցվածքների վատ վիճակ
▪ երիտասարդների գործազրկություն

▪ բարձրադիր գյուղերի սոցիալական ծանր պայմաններ

📌 ՋՈՒՐ — ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ
Արագածոտնի հիմնական խնդիրներից մեկը ջուրն է։
Կառուցվելու են՝
նոր ջրամբարներ,
կաթիլային ոռոգման համակարգեր,
գյուղական ջրագծեր։

Ջուրը պետք է հասնի գյուղացուն, ոչ թե կորչի ճանապարհին։

📌 ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ — ՄԱՐԶԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻԺ
Արագածոտնի սարերն ու արոտավայրերը պետք է դառնան տնտեսական վերածննդի հիմք։

Պետությունը տրամադրելու է՝
անասնապահական սուբսիդիաներ,
էժան կեր,
անասնաբուժական անվճար ծառայություններ,
մսի և կաթի մթերման երաշխավորված համակարգ։

📌 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ
Արագածոտնում բացվելու են՝
կաթնամթերքի, մսամթերքի, չրերի,
բրդի և պահածոների արտադրության փոքր ու միջին գործարաններ։

Գյուղացին պետք է շահույթ ստանա իր աշխատանքի արդյունքից։

📌 ԲԱՐՁՐԱԴԻՐ ԳՅՈՒՂԵՐ — ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ
Ապարանը, Թալինը և բարձրադիր համայնքները ստանալու են հատուկ սոցիալական աջակցություն։

Կառուցվելու են՝ նոր դպրոցներ, բուժկետեր, ճանապարհներ, արևային էներգիայի համակարգեր։

📌 ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
Բացվելու են՝ արհեստագործական և տեխնոլոգիական ուսումնական կենտրոններ։

Ստեղծվելու են՝ փոքր արտադրություններ, գյուղատնտեսական կոոպերատիվներ, տեխնոլոգիական աշխատատեղեր։

📌 ՏՈՒՐԻԶՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
Ամբերդը, Սաղմոսավանքը, Արագածը, Բյուրականը
պետք է դառնան միջազգային զբոսաշրջային ուղղություններ։

Զարգացվելու են՝ լեռնային տուրիզմը, աստղադիտական տուրիզմը, էկոտուրիզմը։

📌 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Բյուրականի գիտական ներուժը պետք է նոր շունչ ստանա։

Ստեղծվելու են՝ գիտատեխնոլոգիական կրթական ծրագրեր, երիտասարդ գիտնականների աջակցության համակարգեր։

📌 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ
Արագածոտնի գյուղացին, ուսուցիչը, բժիշկը, զինվորի ընտանիքը, թոշակառուն պետք է ապրեն արժանապատիվ կյանքով։

Պետությունը պարտավոր է ուժեղացնել մարզային առողջապահությունն ու կրթությունը, ոչ թե մարդկանց թողնել միայնակ խնդիրների դեմ։

ԱՐԱԳԱԾՈՏ՛Ն,
քո սարերի պես ամուր է քո ժողովուրդը։
Ժամանակն է, որ այդ ուժը վերածվի զարգացման,
ոչ թե գոյատևման պայքարի։

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
կառուցելու ենք Արևային Հայաստան,
որտեղ Արագածոտնը լինելու է
ուժեղ գյուղատնտեսության, գիտության ու ազգային արժանապատվության հենասյուն։

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ
ԱՐՑԱԽԻ ԵՎ ԱՐՑԱԽՑՈՒ ՄԱՍԻՆ

Վարդան Ղուկասյանը պաշտոնապես բազմիցս հայտարարել է, որ արցախցին ապրելու է Արցախում: Միակ քաղաքական ուժը ԴՕԿ-ն է, ի տարբերություն մյուսների, որ դա ասել է:

Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ ԴՕԿ Կուսակցությունը պաշտոնապես արձանագրում է.

Արցախցին փախստական չէ:

Արցախցին հյուր չէ:

Արցախցին ողորմություն խնդրող չէ:

Արցախցին հայ ժողովրդի արժանապատվության, պայքարի և պատմական հիշողության կրողն է:

Մեր նախընտրական ծրագրում հստակ ամրագրում ենք. յուրաքանչյուր արցախցի ընտանիք պետք է ունենա իր տունը, իր աշխատանքը, իր անվտանգությունն ու իր արժանապատիվ ապագան:

Սակայն միևնույն ժամանակ մենք պաշտոնապես հայտարարում ենք նաև հետևյալը.

Արցախցու բնական և պատմական բնակավայրը Արցախն է:

Այն հողը, որտեղ հայն ապրել է հազարավոր տարիներ, կառուցել եկեղեցի, դպրոց, ընտանիք, գերեզման ու հայրենիք:

<u>Ուստի Վարդան Ղուկասյանի ծրագրով սկզբունքային և պարտադիր քաղաքական նպատակ է համարվում այն, որ արցախցին վերջնականապես պետք է ապրի Արցախում՝ իր հայրենի հողի վրա, ոչ թե մշտական տեղահանության և օտարության պայմաններում:</u>

<u>Մենք երբեք չենք ընդունելու այն քաղաքականությունը, որը փորձում է արցախցուն վերածել մշտական գաղթականի և փակել Արցախի հարցը:</u>

<u>Արցախը բնակեցնելու, արցախցուն իր հող վերադարձնելու և հայկական պետական արժանապատվությունը վերականգնելու</u>

հարցը լինելու է ազգային անվտանգության ռազմավարական ուղղություն:
Դա սոսկ տարածքի հարց չէ:
Դա ազգի գոյության հարց է:
Դա պատմության, արյան, հիշողության և արժանապատվության հարց է:
Վարդան Ղուկասյանի առաջնորդությամբ
Հայաստանը պարտվածի հոգեբանությամբ չի ապրելու:
Արցախցին վերադառնալու է իր տուն: